ՀՈՒՆՎԱՐ 2013 ԵՐԿԻՐ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի իշխող կոալիցիան 2012թ. մայիսյան ընտրություններում պահպանեց խորհրդարանական մեծամասնությունը՝ վարչական ռեսուրսների չարաշահման, ընտրողների, դիտորդների և լրագրողների ահաբեկման մասին հնչող մեղադրանքների պարագայում: Շարունակվում են ոստիկանությունում պահման ժամանակ տեղի ունեցող խոշտանգումները: Կառավարությունը դեռևս չի առաջարկում իրական քաղաքացիական այլընտրանք զինվորական ծառայությունից խուսափողներին և արդյունավետ կերպով չի քննել ոչ մարտական զինվորական ծառայության ընթացքում տեղի ունեցած մտահոգիչ քանակությամբ մահացության դեպքերը:

Քաղաքական դրդապատճառներով հարուցվող զրպարտության մեղադրանքով դատական գործերն ըստ երևույթին այլևս խնդիր չեն, սակայն լրատվական դաշտում առկա է բազմակարծության պակաս և մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները լուսաբանող որոշ լրագրողներ ենթարկվել են բռնությամբ ուղեկցվող հարձակումների կողմնակի անձանց կողմից, որոնցից ոմանք եղել են Հայաստանի իշխող կուսակցության անդամներ: Լուրջ խնդիրներ են սեռական կողմնորոշմամբ պայմանավորված դաժանությունն ու խտրականությունը: Բյուրոկրատական սահմանափակումները խոչընդոտում են ուժեղ ցավազրկող դեղորայքի հասանելիությունը մահացու հիվանդություններով տառապող մարդկանց համար:

Խորհրդարանական ընտրություններ

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) (OSCE) դիտարկման հաշվետվությունը մայիսի 6-ի ընտրությունը գնահատեց որպես մրցակցային և մեծ մասամբ խաղաղ, այդուհանդերձ նշելով, որ այն ստվերվել է «անհավասար խաղի կանոններով» պայմանավորված վարչական ռեսուրսների չարաշահմամբ, կուսակցական ներկայացուցիչների և տեղական իշխանությունների կողմից ընտրողների նկատմամբ ճնշումների կիրառմամբ, քվեարկության ընթացքին միջամտելով և լրագրողների աշխատանքը խոչընդոտելով:

Մի շարք բռնության դեպքեր են արձանագրվել Երևանում նախընտրական քարոզարշավի ժամանակ, այդ թվում՝ ապրիլի 15-ին վիրավորանքներ են հասցվել Հայ Ազգային Կոնգրեսի (ՀԱԿ) թեկնածու Բաբկեն Գարոյանին և երեք այլ ՀԱԿ

անդամների, ինչպես նաև ՀԱԿ թեկնածու Կարեն Թովմասյանին՝ ապրիլի 17-ին: Երկու դեպքում էլ ՀԱԿ անդամները բաժանում էին քարոզչական տեղեկատվություն: Ոստիկանությունը գործ է հարուցել յուրաքանչյուր դեպքի համար:

Հելսինկայն Ասոցիացիայի դիտորդ Արման Վեզիրյանը բողոք էր ներկայացրել առ այն, որ Երևանի բնակիչ Տիգրան Մանուկյանը հարվածել է իրեն և խոչընդոտել իր՝ որպես դիտորդի աշխատանքը, երբ Վեզիրյանը դիտարկում էր ընդդիմության ակտիվիստների կողմից ընտրական բուկլետների բաժանման ընթացքը ապրիլի 30-ին: Քննություն անց կացնելու փոխարեն, դատախազները ստիպեցին Վեզիրյանին ետ վերցնել բողոքը և հունիսին մեղադրանք ներկայացրեցին վերջինիս Մանուկյանին ծեծելու համար, չնայած նրան, որ Մանուկյանը երբևէ հանդես չէր եկել որպես տուժող: Մինչ այս պահը Վեզիրյանը սպասում է դատավճռի:

Խոշտանգում և վատ վերաբերմունք

Ըստ տեղական իրավապաշտպանների ոստիկանությունում ձերբակալված անձանց նկատմամբ շարունակվում են խոշտանգումներն ու վատ վերաբերմունքի դեպքերը: Իշխանությունները հաճախ հրաժարվում են քննության առնել վատ վերաբերմունքի մասին արված հայտարարությունները կամ ստիպում են քաղաքացիներին ետ վերցնել իրենց բողոքները: Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (CPT) հոկտեմբեր ամսվա հաշվետվությունը դրան նախորդող 2011թ. դեկտեմբերի այցելության վերաբերյալ նշում է երկու բանտային հիմնարկներում գերբնակեցվածության, ոչ հիգիենիկ վիճակի և անհամապատասխան բժշկական խնամքի մասին: CPT-ն նաև նշել է, որ 2012թ.-ին այդ երկու բանտերից չի ստացել տեղեկություն վատ վերաբերմունքի նոր դեպքերի մասին:

Կառավարությունն արդյունավետորեն քննության չի առել ՀԱԿ յոթ ակտիվիստների բողոքն առ այն, որ վերջիններս ծեծի են ենթարկվել ոստիկանությունում 2011թ. օգոստոսին: Ակտվիստների փաստաբանները նույնպես բողոք էին ներկայացրել փաստելով, որ ոստիկանությունն արգելել է տեսակցել իրենց պաշտպանյալներին, մերժել է նրանց պահանջը ակտիվիստներին բժշկական փորձաքննության ենթարկելու վերաբերյալ և ձերբակալել փաստաբաններին յոթ ժամ տևողությամբ: Ակտիվիստները դատարանում վկայել են քննության ընթացքում տեղի ունեցած բռնության մասին, սակայն Երևանի դատարանն այդ առիթով չի պահանջել գործի հարուցում:

Հուլիսին դատարանը չորս ակտիվիստներին՝ Կարապետյանին, Տիգրան Առաքելյանին, Սարգիս Գևորգայնին և Դավիթ Քիրամիջյանին դատապարտեց երկուսից-վեց տարվա ազատազրկման խուլիգանության և պաշտոնատար անձին

դիմադրություն ցույց տալու հատկանիշներով: Նոյեմբերին վճռաբեկ դատարանը որոշեց վճիռները թողնել անփոփոխ: Օգոստոսին մյուս երեքի գործերով ոստիկանությունը կարճեց քրեական գործը՝ ապացույցների բացակայության պատճառով:

Հոկտեմբերին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) վճռեց, որ Հայաստանը խախտել է անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը ընդդիմադիր կուսակցության անդամ Գրիշա Վիրաբյանի նկատմամբ, երբ ոստիկանությունը ձերբակալել է նրան 2004թ. ցույցերից հետո և մետաղյա առարկաներով պարբերաբար հարվածել նրա ամորձիներին: Դատարանը քննադատեց իշխանությունների կողմից արդյունավետ քննություն անց չկացնելու փաստը:

Չարաշահումներ բանակում

Տեղական իրավապաշտպան խմբերը հայտնում են նոյեմբեր ամսվա դրությամբ թվով 44 ոչ մարտական մահացության դեպքերի մասին: Փետրվարի 29-ին հրազենային վնասվածքի հետևանքով սպանվել է ժամկետային զինծառայող Տիգրան Վարյանը: Պաշտոնապես իրականացված դիահերձումը ցույց տվեց, որ Վարյանը ենթարկվել է բռնության, սակայն քննիչները նրա մահը որակեցին որպես ինքնասպանություն: Իրենց զեկույցում տեղական իրավապաշտպան խմբերը նշել են Պաշտպանության նախարարության անհապաղ հետաքննություններ ձեռնարկելու, ենթադրյալ ինքնասպանությունների դեպքերում բռնության նշանների համար պատասխանատվության ենթարկելու և մեծաթիվ մահվան դեպքերի հանգամանքները բացահայտելու ձախողման մասին:

Հունվարին ՄԻԵԴ-ը վճռեց, որ Հայաստանը խախտել է կրոնական ազատության իրավունքը երկու Եհովայի վկաների գծով՝ վերջիններիս բանտարկելով պարտադիր զինվորական ծառայությունից 2003թ. հրաժարվելու համար:

Ըստ «Ֆորում 18», միջազգային կրոնական ազատության ոչ-կառավարական կազմակերպության, սեպտեմբերի 20-ի դրությամբ, ռազմական և այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու պատճառով, առկա էր խղճի և դավանանքի նկատառումներով 32 բանտարկյալ՝ ովքեր համարել են, որ այլընտրանքային ծառայությունը ռազմականից անկախ չէ: Ծառայությունից հրաժարվելու համար դատարանները 2012թ. դատապարտել են ևս 16 Եհովայի վկաների: Դատավճիռներն ուժի մեջ չեն մտել:

2011թ. իշխանությունները փոփոխություններ են առաջարկել այլընտրանքային ծառայության օրենքում: Այդուհանդերձ, ԵԱՀԿ-ն և Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) քննադատել են փոփոխությունները, քանի որ դրանք այլընտրանքային ծառայությունն

իրապես անկախ չեն դարձնում ռազմականից և որ այն 12-18 ամսով ավելի երկար է, քան զինվորական ծառայությունը: Հայաստանի վերաբերյալ իր հուլիսյան ակնարկում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն (HRC) կոչ է արել կառավարությանն ապահովել իրական այլընտրանք զինվորական ծառայությանը, և ազատ արձակել նրանց, ովքեր ազատազրկվել են զինվորական ծառայությունից կամ գոյություն ունեցող այլընտրանքայինից հրաժարվելու համար:

Խոսքի ազատություն

Քաղաքական դրդապատճառներով հարուցվող զրպարտության մեղադրանքով դատական գործերն ըստ երևույթին այլևս լուրջ խնդիր չեն: Այդուհանդերձ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Եվրոպայում լրատվամիջոցների ազատության վերաբերյալ 2012թ. զեկույցը նշում է, որ հայ լրագրողների արտահայտման կարողությունները խոչընդոտվում են ինքնագրաքննության ճնշումներից և մտահոգություն է հայտնում հեռուստաընկերությունների կողմից լրատվական թողարկումներում քաղաքական գովազդի նյութերի օգտագործման կապակցությամբ:

Առնվազն երկու լրագրողներ հարձակումների են ենթարկվել մայիսյան ընտրությունների լուսաբանման ընթացքում: Երևանում, մի մարդ բռունցքով հարվածել է Էլինա Չիլինգարյանին, գետնին գցել նրա տեսախցիկը, քանի որ վերջինս նկարահանել է ընտրատեղամաս ժամանող մի ավտոբուս: Ոստիկանությունը մեղադրանք է ներկայացրել հարձակվողին լրագրողի մասնագիտական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու համար: Գործը հետագայում կարճվել է այն պնդմամբ, որ հարձակման պահին Չիլինգարյանն զբաղված չի եղել իր մասնագիտական պարտականությունների կատարմամբ, քանի որ նա չէր կրում լրագրողին հատուկ տարբերիչ նշան: Իշխանություններն առանձին մեղադրանք չեն ներկայացրել հարձակման փաստի առթիվ:

Գյումրիում, չորս անհայտ տղամարդիկ ընտրատեղամասում մոտեցել են լրագրող Կարեն Ալեքյանին, պոկել վերջինիս լրագրողական տարբերանշանը և կոտրել նրա տեսախցիկը: Ալեքյանը բողոք է ներկայացրել: Այս պահին քննությունը շարունակվում է:

Պալիատիվ խնամք

Ափիոնային դեղորայքի դեղատոմսերի և գնումների բարդ ու ժամանակատար հայաստանյան ընթացակարգերը խոչընդոտում են պատշաճ պալիատիվ խնամքի մատուցմանը: ՄԱԿ-ի 2009-2010թ.թ. վիճակագրական տվյալները վկայում են, որ քաղցկեղից և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից Հայաստանում տարեկան մոտ 7000 մարդ է մահանում: Սակայն, ուժեղ ցավազրկող դեղամիջոցների սպառման վերլուծությունը ցույց է տալիս,

որ չափավոր և ուժեղ ցավերով միայն 600 հիվանդներ են 2012թ. ընթացքում համապատասխան ցավազրկող դեղորայք ստացել՝ իրենց հիվանդության վերջին փուլերում:

Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն

Հուլիսին, Հայաստանի «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն (ՓԻՆՔ Արմենիա) հրապարակեց, որ լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) մարդիք ենթարկվում են աշխատանքային խտրականության, խոչընդոտվում է առողջապահական համակարգից նրանց օգտվելու հնարավարությունը, ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական բռնությունների բանակում, ընտանիքներում և հանրության մեջ:

Մայիսի 8-ին, անհայտ անձինք ինքնաշեն ռումբ են նետել DIY երևանյան բար, որտեղ հաճախ էին լինում ԼԳԲՏ և կանանց իրավունքների ակտիվիստներ: Գրաֆիտի պատկերներն ուղղված էին ԼԳԲՏ մարդկանց որպես թիրախ: ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը հայտարարեց, որ հարձակումը «ճիշտ է և արդարացված»: Ոստիկանությունը ձերբակալել էր երկու կասկածյալների, որոնք ազատ արձակվեցին դատարանի դահլիճից: Անհայտ հարձակվողները կոտրել են բարի գույքը և մահվան սպառնալիքներ հղել դրա սեփականատերերի դեմ մայիսին տեղի ունեցած հետագա երեք միջադեպերի ժամանակ: Ոստիկանությունը հրավիրվել է յուրաքանչյուր հարձակման ժամանակ, սակայն վերջինս միջամտել է միայն մեկ անգամ:

Մայիսի 21-ին Երևանում մի խումբ մարդիկ սպառնացել են բռնություն կիրառել և հոմոֆոբ կարգախոսներով բղավել են ՓԻՆՔ Արմենիայի և Հայաստանի Կանանց ռեսուրսային կենտրոնի կողմից կազմակերպված բազմազանության տոնի երթի մասնակիցների:

Մարդու իրավունքների պաշտպաններ

Ապրիլին, մոտ 200 մարդ էր հավաքվել իրավապաշտպան հասարակական կազմակերպության՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակի դիմաց, ովքեր ձվեր և քարեր նետելով՝ կոտրեցին պատուհանները և սպառնում էին աշխատակիցներին նոր բռնություններով, եթե ըստ նախատեսված պլանի ցուցադրվեին ադրբեջանցի կինոգործիչների կողմից նկարահանված ֆիլմերը: Խումբը ցրվեց այն բանից հետո, երբ ՀՔԱ առաջնորդները համաձայնեցին չեղյալ հայտարարել ֆիլմերի ցուցադրությունը: Ամբոխի հավաքվելուն պես ՀՔԱ աշխատակազմը դիմել է ոստիկանությանը, ովքեր սակայն չեն միջամտել:

Ապրիլին, դատարանը մերժել է Լեռնապատի գյուղապետ Վանո Եղիազարյանի հայցը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի դեմ: 2011թ. հրապարակված հարցազրույցում Սաքունցը մեղադրել էր Եղիազարյանին յուրացումների և չարաշահումների մեջ: Դատարանը եզրակացրեց, որ Եղիազարյանը, որպես պետական պաշտոնյա, «պետք է ավելի հանդուրժող լինի իրեն վերաբերվող կարծիքների և հրապարակումների նկատմամբ»:

Հիմնական միջազգային դերակատարներ

Եվրոպական հարևանության քաղաքականության առաջընթացի մայիսին լույս տեսած զեկույցում Եվրոպական հանձնաժողովը կոչ է արել Հայաստանին ուշադրություն դարձնել կոռուպցիային, ԶԼՄ-ների ազատությանը, դատական համակարգի նկատմամբ ցածր հանրային վստահությանը և վատ վերաբերմունքի դեպքերի ոչ համարժեք հետաքննությանը: Այն նաև բարձր գնահատականի է արժանացրել կառավարությանը գենդերային հավասարության և առողջապահության օրենքների բարելավման համար:

Եվրոպական միության արտաքին գործերի նախարարների փետրվարին Բրյուսելում Արտաքին հարաբերությունների խորհրդում ընդունած Հարավային Կովկասին վերաբերող եզրակացություններում կարևորեցին ազատ և արդար ընտրությունները, հետագա դատական բարեփոխումները, քաղաքական բազմակարծությունը, լրատվամիջոցների ազատությունն ու հավասար հասանելիությունը, Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանությունը:

Հուլիսին իր Երևան կատարած այցի ընթացքում ԵՄ նախագահ Հերման վան Ռոմպույը ողջունել է Հայաստանի իշխանությունների ջանքերը ավելի մրցունակ և թափանցիկ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու կապակցությամբ, սակայն զգուշացրել է, որ 2013թ. փետրվարի նախագահական ընտրությունները պետք է լինեն ավելի ժողովրդավարական:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին (ՔՔԻՄԴ) Հայաստանի համապատասխանության հուլիսի հաշվետվության մեջ Մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ) մի շարք մտահոգություններ հայտնեց, ներառյալ հակախտրականության համապարփակ օրենսդրության բացակայության, ռասայական և կրոնական փոքրամասնությունների ու ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ բռնության, խտրականության և կանանց նկատմամբ բռնության մասին, ինչպես նաև իրավապաշտպանների նկատմամբ տեղի ունեցող խոշտանգումների և սպառնալիքների ու հարձակումների համար պատասխանատվության բացակայության մասին:

Մայիսին, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը դատապարտել է սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնությունն ու

անհանդուրժողականությունը: Հայաստանում ԵՄ պատվիրակությունը և ԵԽ-ի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) մտահոգություն են հայտնել հակա-ԼԳԲՏ՝ ատելության խոսքի և բռնության նկատմամբ Հայաստանի ոչ ադեկվատ արձագանքի առթիվ:

Հայաստանի համար մայիսին ընդունված նոր ռազմավարության մեջ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկն ընդգծել է այնպիսի «հետագա քայլերի» անհրաժեշտության մասին, ինչպիսիք են ոստիկանության և դատական համակարգի բարեփոխումները և լրատվական դաշտում բազմակարծության խթանումը:

Թարգմանցված է անգլերենից